

# Հ Ո Վ Ա Ս Ե Փ Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն



Սույն թվի փետրվարի 16-ին կնքեց մահ-կանացուն Ս. էջմիածնի Գեորգյան Ճեմարանի բազմամյա վերակացու, հայտնի մանկավարժ Հովսեփ Գրիգորյանը:

Հանգուցյալը ծնվել է 1877 թվի դեկտեմբերի 3-ին Վրացական ՍՍԻ Սղեխի քաղաքում: Իր սկզբնական կրթությունը նա ստացել է տեղի հայկական դպրոցում, իսկ միջնակարգը՝ ներսիսյան դպրոցում: 1896 թվին, փայլուն գնահատականներով ավարտելով ներսիսյան դպրոցը, նա մեկնում է էջմիածին և ընդունվում Գեորգյան Ճեմարանի լսարանական բաժինը, որն ավարտում է 1899 թվի մայիսին: Այնուհետև նա երկու տարի ուսուցչություն է անում Կերլի հայոց դպրոցում: 1901 թվի աշնանը նա հրավիրվում է Գեորգյան Ճեմարան՝ վերակացուի և ուսուցչի պաշտոնով: Նա այստեղ պաշտոնավարում է մինչև 1918 թիվը, Ճեմարանի փակվելը:

Հովսեփ Գրիգորյանը Ճեմարանի ամենա-սիրված ուսուցիչներից մեկն էր: Նա իր ամբողջ էությունը ձուլել էր Ճեմարանի հետ:

Մոտացած իր անձը, իր հանգիստը, նա ապրում, շնչում էր այդ հաստատության կյանքով: Ուսուցչական աշխատանքներում նա աչքի էր ընկնում իր զարմանալի ճշտապահությամբ, սլարտաձանաչությամբ և պահանջկոտությամբ, միաժամանակ՝ իր անկեղծ ու չքամ սիրով դեպի Ճեմարանի իր բոլոր կարգապահ, աշխատասեր, ուսումնասեր սաները:

1919—1920 թվերին Հովսեփ Գրիգորյանն աշխատում է Լենինականում (նախկին Այեր-սանդրապոլում) որպես այդ շրջանի ժողովրդական դպրոցների տեսուչ: 1924 թվականից նա վերսկսում է իր մանկավարժական գործունեությունը Վաղարշապատում, այնտեղի միջնակարգ դպրոցում և մանկավարժական ուսումնարանում:

1930 թվից սկսում է Հովսեփ Գրիգորյանի գրական բնույթի գործունեությունը: Ավելի քան տասը տարի նա զբաղվում էր թարգմանությամբ:

Թարգմանչական աշխատանքներին դուր ընթաց, Հովսեփ Գրիգորյանը զբաղվում էր և ինքնուրույն ուսումնասիրություններով, որոնք տպագրվում էին «էջմիածին» ամսագրում «Ճեմարանցի» ծածկանվան տակ: Նրա հոդվածներն ընթերցվում էին մեծ հետաքրքրությամբ: Նրա դրած վերջին հոդվածը հանդիսացավ «Լուսիս կարողիցու կարևոր»-ը, որի առաջին մասը լույս տեսավ մեր ամսագրի 1950 թվի սեպտեմբեր-հոկտեմբեր համարում, իսկ շարունակությունը տպագրվում է ներկա համարում:

Հանգուցյալը օժտված էր բարոյական բարձր հատկանիշներով: Նա շիտակ բնավորության տեր էր: Անձնվիրությունը նրա էությունն էր: Նա միշտ էլ օգնության էր հասնում իր մերձավոր և հեռավոր բարեկամներին և ծանոթներին, նա էջմիածնի Գեորգյան Ճեմարանի իր նախկին ուսանողներին սիրում էր իր հարազատ որդիների նման և ուրախանում նրանց հասարակական-կուլտուրական կյանքում ունեցած հաջողության համար:

Այդ ազնիվ մարդու, բարեխիղճ ուսուցչի և համեստ հասարակական գործիչի կորուստը ողբում են իր բոլոր բարեկամներն ու ընկերները, իր բազմաթիվ աշակերտները, որոնք սփռված են ամենուրեք՝ Սովետական Միության մեջ և արտասահմանում: